

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
 ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
 Հիմնադրամի հոգաբարձուների
 խորհրդի 20-02-2025 թ. որոշմամբ
 ««ՏՈՒԿ-ՖԱԱՌԱԼՊ» ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ - ՕՎԵՐՆ-ՌՈՆ-ԱԼՊԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ
 ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
 Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
 հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	«ՏՈՒԿ-ՖԱԱՌԱԼՊ» ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ - ՕՎԵՐՆ-ՌՈՆ-ԱԼՊԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ՇԵՆԳԱՎԻԹ ՇԵՆԳԱՎԻԹ ԹԱՂԱՄԱՍ ՉԵԽՈՎԻ 6 ԲՆ. 6	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.1253597	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2022-07-20	
1.5 ՀՎՀՀ-ն	02302221	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)93169977	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	tuc.am	
1.8 Էլեկտրոնային փոստը	general@bfo.am	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Գրեգուար Ռենե Ատամյան		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Հազոպ Աժամյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	5	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Դրամաշնորհ	33,086,150
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		

9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Տեխնոլոգիական կրթության և ուսուցման ոլորտի կրթական նախնական, արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսնողների վերապատրաստում	34,702,976	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	34,702,976	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	34,702,976	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 23 էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

ԵՐԵՎԱՆ, 2025

«Տուկ-Ֆառալպ» Տեխնոլոգիական ուսուցման կենտրոն- Օվերն-
Ռոն- Ալպեր Հայկական Ժողովրդագիա>>Կրթական Հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտ

«ԳԼՈՒ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

««ՏՈՒԿ-ՖԱՌԱԼՊ» ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ – ՕՎԵՐՆ-ՌՈՆ-
ԱԼՊԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ»
ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ արդիտորական եզրակացություն
2024թ. դեկտեմբեր 31

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9



«ԳԼՈՒ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ

ՀՀ, ք.Երևան 0070, Ե.Քոչարի 19/8; հեռ.՝ (374 95) 48 00 47;
auditglobaudit@mail.ru; www.globaudit.am

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «ՏՈՒԿ-ՖԱՌԱԼՊ» ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ – ՕՎԵՐՆ-ՌՈՆ-ԱԼՊԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ հոգաբարձուների խորհրդին,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՏՈՒԿ-ՖԱՌԱԼՊ» ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ – ՕՎԵՐՆ-ՌՈՆ-ԱԼՊԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (այսուհետ՝ Հիմնադրամ) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2024թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և զուտ ակտիվի, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրեցրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրի (ՀԷՄՍԻ կանոնագիրը), և պահպանել ենք ՀԷՄՍԻ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլնորանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք՝ սխալի կամ խարդախության արդյունքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի

կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:

Մենք ծանուցել ենք ղեկավարությանը աուդիտի շրջանակների, ժամանակացույցի և կարևոր բացահայտումների մասին՝ ներառյալ ներքին վերահսկողության համակարգում առկա թերությունների մասին, որոնք հայտանաբերվել են իրականացված աուդիտի ընթացքում:

Մենք ծանուցել ենք ղեկավարությանը նաև այն մասին, որ առաջնորդվել ենք էթիկայի դրոյթներով՝ կապված անկախության հետ և բացահայտել ենք նրանց բոլոր փոխհարաբերությունները, որոնք կարելի է ողջամտորեն մտածել, որ կկրեն մեր հարաբերությունները և համապատասխան երաշխիքները, որտեղ որ կարելի է:

Ղեկավարության հետ քննարկված բոլոր դիտարկումներից ընտրվել են նրանք, որոնք առավել կարևոր են ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և համարվում են հիմնական աուդիտորական հիմնահարցեր (ՀՄՀ): Այդ խնդիրները ներկայացվել են աուդիտորական եզրակացությունում, եթե ՀՀ օրենսդրությամբ և սահմանված կարգերով չի արգելվում հրապարակայնորեն դրանց բացահայտումը կամ, հազվադեպ դեպքերում, մենք որոշում ենք, որ նման բացահայտման դեպքում հասարակությանը հասցված վնասներն ավելի մեծ կարող են լինել:

«Գլոբ Աուդիտ» ՍՊԸ

Տնօրեն Դ. Հարությունյան FCCA

25 հունիս, 2025թ.
ք. Երևան



Աուդիտոր Կ. Շահինյան FCCA

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ	2024թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	3	17,228	18,074
		17,228	18,074
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	4	850	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	5	3,172	80
Դրամական միջոցներ և համարժեքներ	6	2,829	7,428
		6,851	7,508
Ընդամենը ակտիվներ		24,079	25,582
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կուտակված շահույթ		-	-
		-	-
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	7	17,229	18,074
		17,229	18,074
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	7	5,022	5,110
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	8	1,828	2,398
		6,850	7,508
Ընդամենը պարտավորություններ		23,780	25,582
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		24,079	25,582

Գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Հ. Սարգսյան

Գ. Ղարիբջանյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ		2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծնթ.		
Շնորհներից եկամուտ	7	34,506	38,083
Այլ եկամուտներ		196	6
Աշխատավարձի ծախսեր		(18,551)	(16,666)
Գրասենյակային ծախսեր		(269)	(10)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր		(5,310)	(3,054)
ՀՄ-ների մաշվածության գծով ծախս		(3,544)	(7,132)
Փոստի և հաղորդակցության գծով ծախսեր		(295)	(238)
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր		(2,730)	(1,650)
Ապահովագրության գծով ծախս		(774)	(234)
Նյութերի գծով ծախսեր		(1,835)	(7,326)
Այլ ծախսեր		(927)	(1,397)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/վնաս	9	(467)	(382)
Շահույթ մինչև հարկումը		-	-
Շահութահարկի գծով ծախս		-	-
Տարվա արդյունք		-	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-

Գործադիր տնօրեն



Վ. Սարգսյան

Գլխավոր հաշվապահ

Գ. Ղարիբջանյան

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Դրամաշնորհներից մուտքեր	33,086	40,518
Նյութերի, ապրանքների ձեռքբերման գծով	(5,165)	(113)
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	(9,234)	(7,238)
Աշխատավարձի գծով վճարում	(14,499)	(12,605)
Հարկերի և պարտադիր վճարների գծով վճարումներ	(4,782)	(4,315)
Այլ գործառնական ելքեր	(915)	(787)
Այլ գործառնական մուտքեր	196	6
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցներ	(1,404)	15,467
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռք բերում	(2,728)	(7,766)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական միջոցներ	(2,728)	(7,766)
Դրամական միջոցների զուտ աճ/(նվազում)	(4,132)	7,701
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների վրա	(468)	(368)
Դրամական միջոցներ փարեսկզբի դրությամբ	7,428	95
Դրամական միջոցներ տարեվերջի դրությամբ	2,829	7,428

Գործադիր տնօրեն



Սարգսյան

Գլխավոր հաշվապահ

Գ. Ղարիբջանյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«ՏՈՒԿ-ՖԱՌԱԼՊ» տեխնոլոգիական ուսուցման կենտրոն-ՕՎԵՐՆ-ՌՈՆ-ԱԼՊԵՐ հայկական ֆեդերացիա» կրթական հիմնադրամը(այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամատություն չունեցող, ոչ առևտրային կազմակերպություն է: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2022թ հուլիսի 10-ին, գրանցման համար 222.160.1253597:

Ընկերության գտնվելու վայրն է՝ ՀՀ ք. Երևան, Չեխովի փողոց 6 շենք, բնակարան 6:

Հիմնադրամի շահառուներն են կրթական, գիտական ու տեխնոլոգիական ոլորտներին առնչություն ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև կրթական, գիտական ու տեխնոլոգիական ոլորտներին աջակցություն ցուցաբերող ֆիզիկական և իրավաբանական անձինք ու միջազգային կազմակերպությունները:

Հիմնադրամի նպատակներն են՝

- Նպաստել ՀՀ կրթական ու գիտական համակարգի արդիականացմանը ու զարգացմանը,
- Աջակցել ՀՀ-ում տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտի միջին և բարձր տեխնոլոգիական որակավորում ունեցող մասնագետների պատրաստմանը, վերապատրաստմանը, որակավորման մակարդակի բարձրացմանը,
- Նպաստել և աջակցել Հայաստանի Հանրապետության տարածքում բնության պահպանությանն ու վերարտադրությանն ուղղված ծրագրերի իրականացմանը,
- Իրականացնել միջոցառումներ այլընտրանքային էներգիայի աղբյուրների ստեղծման, արևի, քամու, ինչպես նաև բնության պահպանությանը չվնասող այլ տեխնոլոգիաների տարածման ուղղությամբ:

Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

- Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը
- Հիմնադրամի գործադիր տնօրենը:

Հոգաբարձուների խորհրդի կազմը ներկայացված է ստորև՝

Հայկ Չոբանյան – խորհրդի նախագահ
Գրեգուար Ատամյան – խորհրդի անդամ
Էննի Էքմեջյան – խորհրդի անդամ

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2024թ.-ին կազմել է 5 մարդ (2023թ.-ին 5 մարդ):

2. Պատրաստման հիմքերը

Պատրաստման հիմունքներ-հաշվապահական քաղաքականության հիմնական մոտեցումներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են

ստորև: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության գործառնական արժույթը:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

Հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության, պատրաստվում են հաշվեգրման սկզբունքի հիման վրա:

Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների օգտագործում

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար Ընկերության ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գործարքներ արտարժույթով

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալ օրվա միջին փոխարժեքը:

	31.12.2024	31.12.2023
	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
1 ԱՄՆ դոլար	396.56	404.79
1 Եվրո	413.89	447.90
1 Ռուսական ռուբլի	3.71	4.50
1 Ֆունտ ստեռլինգ	499.27	515.38

Հաշվետու ամսաթվի դրությամբ.

ա) արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվում են (վերահաշվարկվում են)՝ կիրառելով փակման (հաշվետու ամսաթվի) փոխարժեքը,

բ) արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառվում են սկզբնական արժեքով, ներկայացվում են գործարքի օրվա փոխարժեքով:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են արտարժույթով գործարքների մարման կամ հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով դրամային հոդվածների վերագնահատման արդյունքում, ճանաչվում են ֆինանսական արդյունքում:

Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական գործիքը պայմանագիր է, որը մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուս կազմակերպությունում՝ ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք:

Կազմակերպությունը պետք է ճանաչի ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը միայն այն դեպքում, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Հիմնական ֆինանսական գործիքներ են համարվում՝

- դրամական միջոցներ և համարժեքներ;
 - պարտքային գործիք (օրինակ՝ դեբիտորական պարտք, տրված կամ ստացված մուրհակ կամ փոխառություն);
 - կրեդիտորական պարտքեր:

Դրամական միջոցները կազմված են դրամարկղի և ընթացիկ հաշիվների մնացորդներից:

Դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են (օրինակ՝ կարճաժամկետ բանկային ավանդները), որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարների չափով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմակերպությունը պետք է չափի ֆինանսական գործիքները առանց հանելու գործառնության հետ կապված որևէ ծախսում, որը կազմակերպությունը կարող է կրել վաճառքի կամ այլ օտարման դեպքում:

Երբ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է, կազմակերպությունը պետք է այն չափի գործարքի գնով (ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները, բացի այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական չափման, որոնք հետագայում չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով), բացառությամբ եթե համաձայնությունն, ըստ էության, իրենից ներկայացնում է ֆինանսավորման գործարք՝ կամ գործարքի կողմ հանդիսացող կազմակերպություններից մեկի մոտ առաջացնելով ֆինանսական պարտավորություն, կամ կոնտրագենտի մոտ՝ ֆինանսական ակտիվ:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները նյութական **ակտիվներ** են, որոնք՝

ա) առկա են ապրանքների կամ ծառայությունների արտադրության (մատուցման) կամ մատակարարման, այլ կողմերին վարձակալության տալու կամ վարչական նպատակներով օգտագործելու համար, և

բ) ակնկալվում է օգտագործել ավելի քան մեկ ժամանակաշրջանի ընթացքում:

Կազմակերպությունը պետք է ճանաչի հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) **հավանական է**, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն, և

բ) միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Չափումը ճանաչման պահին

Կազմակերպությունը հիմնական միջոցի միավորը սկզբնական ճանաչման պահին պետք է չափի իր սկզբնական արժեքով, որն ընդգրկում է.

ա) գնման գինը, ներառյալ իրավաբանական և բրոքերային ծառայությունների դիմաց վճարները, ներկրման տուրքերը և գնման չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը և արտոնությունները;

բ) ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում: Սա կարող է ներառել տեղանքի նախապատրաստման ծախսումները, տրանսպորտային, բեռնման և բեռնաթափման սկզբնական ծախսումները, տեղակայման և հավաքման, ինչպես նաև ֆունկցիոնալության տեստավորման ծախսումները;

միավորի ապատեղակայման և քանդման, ինչպես նաև իր զբաղեցրած տեղանքի վերականգնման սկզբնական գնահատված ծախսումները, որոնց գծով կազմակերպության պարտականությունը առաջանում է կամ միավորի ձեռքբերման ժամանակ, կամ միավորները որոշակի ժամանակաշրջանում օգտագործման հետևանքով, որի նպատակը տարբեր է, քան այդ ժամանակաշրջանի ընթացքում պաշարների արտադրությունը:

Հետևյալ ծախսումները հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքում չներառվող ծախսումներ են, և կազմակերպությունը դրանք պետք է ճանաչի որպես **ծախս**, երբ դրանք կատարվում են՝

ա) նոր արտադրամաս բացելու հետ կապված ծախսումները;

բ) նոր արտադրատեսակ կամ ծառայություն ներդնելու հետ կապված ծախսումները (ներառյալ գովազդի և առաջխաղացման գծով ծախսումները);

գ) նոր վայրում կամ հաճախորդների նոր խմբի հետ գործունեություն իրականացնելու ծախսումները (ներառյալ աշխատակիցների ուսուցման գծով ծախսումները);

դ) վարչական և այլ ընդհանուր վերադիր ծախսումները;

ե) փոխառության ծախսումները:

Հիմնական միջոցի միավորի կառուցման կամ մշակման ընթացքում հարակից գործառնություններից ստացված եկամուտը և դրա հետ կապված ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե այդ գործառնությունները անհրաժեշտ չեն միավորը նախանշված վայր և աշխատանքային վիճակի բերելու համար:

Չափումը սկզբնական ճանաչումից հետո

Վերագնահատման մոդել

Կազմակերպությունը հիմնական միջոցի միավորը, որի իրական արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել, պետք է չափի վերագնահատված գումարով, որն իրենից ներկայացնում է դրա իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած համապատասխան կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Վերագնահատումները պետք է կատարվեն բավարար պարբերականությամբ, որպեսզի հաշվեկշռային արժեքը էականորեն չտարբերվի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ իրական արժեքից: Եթե հիմնական միջոցի միավորը վերագնահատվում է, հիմնական միջոցի ամբողջ դասը, որին պատկանում է այդ ակտիվը, պետք է վերագնահատվի:

Եթե ակտիվի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կուտակվի սեփական կապիտալի վերագնահատումից արժեքի աճի հոդվածում: Այնուամենայնիվ, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվների նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում՝ այն չափով, որով նախապես նվազումը ճանաչվել էր շահույթում կամ վնասում:

Եթե ակտիվի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, նվազումը պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում այն գումարի չափով, որը չի գերազանցում այդ ակտիվների գծով վերագնահատումից արժեքի աճի առկա կրեդիտային մնացորդը: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված նվազումը պակասեցնում է սեփական կապիտալի վերագնահատումից արժեքի աճի հոդվածում կուտակված գումարը:

Մաշվածություն

Կազմակերպությունը ակտիվի մաշվող գումարը պետք է պարբերական հիմունքով բաշխի դրա օգտակար ծառայության ընթացքում:

Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարեցվում է, երբ ակտիվն ապաճանաչվում է: Մաշվածության հաշվարկը չի դադարեցում այն դեպքում, երբ ակտիվը գտնվում է պարապուրդի մեջ կամ հանվում է ակտիվ օգտագործումից, բացառությամբ եթե ակտիվը ամբողջությամբ մաշեցվել է: Այնուամենայնիվ, ակտիվի օգտագործման վրա հիմնված մեթոդների համաձայն՝ մաշվածության գումարը կարող է լինել զրո, քանի դեռ չկա արտադրություն:

Կազմակերպությունը ընտրել է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հիմնական միջոցների մաշվածության ժամկետներն ըստ դասերի հետևյալն են.

❖ Շենքեր, շինություններ	20-80 տարի
❖ Արտադրական սարքավորումներ	5-10 տարի
❖ Հոսքային գծեր, ոռոգատատեխնիկա	3-10 տարի
❖ Հաշվողական և համակարգչային տեխնիկա	1-5 տարի
❖ Այլ հիմնական միջոցներ	8-10 տարի

Եթե առկա է հայտանիշ, որ վերջին տարեկան հաշվետու ամսաթվից սկսած նշանակալի փոփոխություններ են տեղի ունեցել ակտիվից ակնկալվող ապագա տնտեսական օգուտների սպառման մոդելում, կազմակերպությունը պետք է վերանայի իր ներկա մաշվածության մեթոդը և, եթե ընթացիկ ակնկալիքները տարբերվում են, փոփոխի մաշվածության մեթոդը՝ արտացոլելու համար նոր մոդելը:

Արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ կազմակերպությունը պետք է գնահատի, թե արդյո՞ք հիմնական միջոցի միավորը կամ միավորների խումբը արժեզրկվել է, և եթե՝ այո, ապա ինչպես ճանաչել և չափել արժեզրկումից կորուստը:

Ապաճանաչում

Կազմակերպությունը պետք է ապաճանաչի հիմնական միջոցի միավորը, երբ այն օտարվում է կամ դրա օգտագործումից կամ օտարումից չի ակնկալվում ապագա տնտեսական օգուտներ:

Կազմակերպությունը հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ վնասը պետք է ճանաչի շահույթում կամ վնասում:

Կազմակերպությունը հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից օգուտը կամ վնասը պետք է որոշի որպես միավորի օտարումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվը ֆիզիկական սուբստանցիայից զուրկ որոշելի ոչ դրամային ակտիվ է: Այդպիսի ակտիվը որոշելի է, երբ այն՝

ա) առանձնացվելի է, այսինքն՝ եթե կարող է առանձնացվել կամ բաժանվել կազմակերպությունից և վաճառվել, փոխանցվել, տրամադրվել լիցենզիայով, տրվել վարձակալությամբ կամ փոխանակվել՝ կա՞մ անհատապես, կա՞մ հարակից պայմանագրի, ակտիվի կամ պարտավորության հետ միասին, կամ

բ) առաջանում է պայմանագրային կամ այլ իրավաբանորեն ամրագրված իրավունքներից՝ անկախ նրանից, թե արդյոք այդ իրավունքները փոխանցելի են կամ առանձնացվելի են կազմակերպությունից, կամ այլ իրավունքներից ու պարտականություններից:

Ոչ նյութական ակտիվները չեն ներառում՝

ա) ֆինանսական ակտիվները, կամ

բ) օգտակար հանածոների արդյունահանման և օգտագործման իրավունքները և օգտակար հանածոների պաշարները, ինչպիսիք են՝ նավթը, բնական գազը և համանման չվերականգնվող այլ ռեսուրսներ:

Կազմակերպությունը պետք է ճանաչի ոչ նյութական ակտիվը որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, եթե հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն, ակտիվի ինքնարժեքը կամ արժեքը կարող է արժանահավատորեն չափվել և այն կազմակերպության ներսում կատարած ծախքերի արդյունք չէ:

Կազմակերպությունը ոչ նյութական ակտիվները պետք է չափի սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Բոլոր ոչ նյութական ակտիվները պետք է դիտարկվեն որպես սահմանափակ օգտակար ծառայություն ունեցող: Պայմանագրային կամ այլ իրավաբանորեն ամրագրված իրավունքներից բխող ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը չպետք է գերազանցի պայմանագրային կամ այլ իրավաբանորեն ամրագրված իրավունքների ժամկետը, սակայն կարող է լինել ավելի կարճ՝ կախված այն ժամկետից, որի ընթացքում կազմակերպությունն ակնկալում է օգտագործել ակտիվը:

Եթե ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը չի կարող արժանահավատորեն գնահատվել, օգտակար ծառայությունը պետք է որոշվի հիմնվելով ղեկավարության լավագույն գնահատականի վրա, սակայն չպետք է գերազանցի տասը տարին:

Պաշարներ

Պաշարները այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, արտադրության ընթացքում են նման վաճառքի համար կամ հումքի կամ նյութերի ձևով են՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար:

Կազմակերպությունը պաշարները պետք է չափի ինքնարժեքից և գնահատված վաճառքի գնից՝ հանած համալրման և վաճառքի գնահատված ծախսումները, նվազագույնով:

Կազմակերպությունը պաշարների ինքնարժեքում պետք է ներառի ձեռքբերման, վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Պաշարների ձեռքբերման ծախսումները ներառում են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը և հարկերը (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են կազմակերպությանը ետ վերադարձման), ինչպես նաև տրանսպորտային, բեռնմանբեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, նյութերի և ծառայությունների ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային գեղջերը, գների իջեցումները և նմանատիպ այլ հոդվածներ հանվում են:

Պաշարների ինքնարժեքում չեն ներառվում գերնորմատիվային ծախսումները՝ կապված նյութերի, աշխատուժի և արտադրական այլ ծախսումների գերաճախսի հետ, պահպանման ծախսումները, բացառությամբ եթե դրանք անհրաժեշտ են արտադրության գործընթացի ընթացքում՝ նախքան հաջորդ արտադրական փուլին անցնելը, վարչական վերադիր ծախսումները, որոնք կապված չեն պաշարները ներկա գտնվելու վայր հասցնելու կամ պատշաճ վիճակի բերելու հետ և վաճառքի ծախսումները:

Ծառայություններ մատուցող կազմակերպության պաշարները չափվում են իրենց արտադրական ծախսումներով: Այդ ծախսումները բաղկացած են անմիջականորեն ծառայություն մատուցելու գործում զբաղված անձնակազմի աշխատուժի ծախսումներից, ներառյալ կառավարող տեխնիկական անձնակազմը, ինչպես նաև բաշխման ենթակա վերադիր ծախսումներից: Վաճառքի և ընդհանուր վարչական անձնակազմի հետ կապված աշխատուժի և այլ ծախսումներ չեն ներառվում պաշարների ինքնարժեքում, այլ ճանաչվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակաշրջանում: Ծառայություններ մատուցող կազմակերպությունների պաշարների ինքնարժեքը չի ներառում շահույթի մարժաները կամ չբաշխվող վերադիր ծախսումները, որոնք հաճախ ներառվում են ծառայության ոլորտի կազմակերպությունների կողմից գանձվող վճարներում:

Կազմակերպությունը պաշարների ինքնարժեքը չափում է՝ կիրառելով «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) բանաձևերը:

Կազմակերպությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում պետք է գնահատի, թե արդյո՞ք պաշարները արժեզրկված են, այսինքն՝ հաշվեկշռային արժեքը ոչ ամբողջովին է փոխհատուցելի (օրինակ՝ քանի որ վնասվել են, հնացել են, կամ վաճառքի գները նվազել են): Եթե պաշարների որևէ հոդված (կամ հոդվածների խումբ) արժեզրկվել է, ապա կազմակերպությունը այդ պաշարները պետք է չափի դրանց վաճառքի գնով՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, և ճանաչի արժեզրկումից կորուստ:

Շնորհներ

Կազմակերպությունը պետական շնորհները պետք է ճանաչի հետևյալ կերպ՝

ա) շնորհը, որը ստացողի համար չի սահմանում որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում, երբ շնորհի գծով մուտքերը ստացման ենթակա են;

բ) շնորհը, որը ստացողի համար սահմանում է որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում միայն, երբ պայմանների կատարումը բավարարվում է;

գ) ստացված շնորհները, նախքան հասույթի ճանաչման չափանիշները բավարարելը, ճանաչվում են որպես պարտավորություն:

Կազմակերպությունը շնորհները պետք է չափի ստացված կամ ստացվելիք ակտիվի իրական արժեքով:

Շնորհները, ներառյալ ոչ դրամային շնորհները, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են որպես հետաձգված եկամուտ:

Շնորհը ճանաչվում է որպես եկամուտ՝ սիստեմատիկ և ռացիոնալ հիմունքով, ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերմանը վերաբերող շնորհները ներառվում են ոչ ընթացիկ պարտավորություններում և ճանաչվում են որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Հասույթներ

Կազմակերպությունը հասույթը պետք է չափի ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքը հաշվի է առնում կազմակերպության կողմից տրամադրվող ցանկացած առևտրական զեղչերի, ժամկետից շուտ վճարման զեղչերի և քանակային զիջումների գումարները:

Կազմակերպությունը հասույթում պետք է ներառի ստացված կամ ստացվելիք տնտեսական օգուտների միայն այն համախառն ներհոսքը, որը պատկանում է տվյալ կազմակերպությանը:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, կազմակերպությունը պետք է ճանաչի գործարքից հասույթը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարող է արժանահավատորեն գնահատվել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը.

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, կազմակերպությունը պետք է ճանաչի հասույթը միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք կփոխհատուցվեն:

Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը և սոցիալական ապահովության մասհանումները, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները

Կազմակերպությունը կարող է փոխհատուցել աշխատակիցների՝ տարբեր պատճառներով առաջացող բացակայությունները, ներառյալ տարեկան արձակուրդը և հիվանդության հետ կապված արձակուրդը: Որոշ կարճաժամկետ փոխհատուցելի բացակայություններ կուտակվում են. դրանք կարող են փոխադրվել հետագա ժամանակաշրջաններ և օգտագործվել այդ ժամանակաշրջաններում, եթե աշխատակիցը ընթացիկ ժամանակաշրջանի իրավունքը ամբողջությամբ չի օգտագործել:

«ՏՈՒԿ-ՖԱՐՄԱԿ» ՏԵԽՆՈԼՈԳԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ - ՕՎԵՐՆ-ՌՈՆ-ԱԼ ՊԵՐ ՀԱՏՅԱԿԱԿԱՆ ՖԵՐԵՐԱՏԻՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ Ֆինանսական հաշվետվություններ 2023թ. դեկտեմբերի 31

3. Հիմնական միջոցներ

	Հետաձգված ծախս	Մեքնա սարքավորումներ	Արտադրական և տնտեսական գույք	Այլ ՀՄ-ներ	Օգտագործման համար ոչ մատչելի ՀՄ-ներ	Ընդամենը
Հազար դրամ						
Սկզբնական արժեք	-	450	-	-	2,990	3,440
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	-	11,420	2,590	2,998	4,758	21,766
Ավելացում	7,748	-	-	-	(7,748)	-
Ներքին շարժ	-	-	-	-	-	-
Նվազեցումներ	-	-	-	-	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,748	11,870	2,590	2,988	-	25,206
Ավելացում	300	566	-	174	1,688	2,728
Ներքին շարժ	1,688	-	-	-	(1,688)	-
Նվազեցումներ	(300)	-	-	-	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,436	12,436	2,590	3,172	-	27,634
Կուտակված մաշվածություն						
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-	-	-
Տարվա ծախս	189	6,234	486	223	-	7,132
Դուրսգրում	-	-	-	-	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	189	6,234	486	223	-	7,132
Տարվա ծախս	575	2,103	518	378	-	3,573
Դուրսգրում	(300)	-	-	-	-	(300)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	464	8,337	1,004	601	-	10,405
Հաշվեկշռային արժեք						
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,559	5,636	2,104	2,775	-	18,074
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,972	4,099	1,586	2,571	-	17,228

Ընկերությունում 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա են զրո հաշվեկշռային արժեք ունեցող 6,351 հազար դրամ արժեքով հիմնական միջոցներ (2023թ. -ին՝ 0 դրամ):

4. Պաշարներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք և Նյութեր	775	-
Արագամաշ առարկաներ	75	-
	850	-

5. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տրված կանխավճարներ	3,028	76
Պարտքեր Բյուջեի գծով	144	4
	3,172	80

6. Դրամական միջոցներ և համարժեքներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդներ բանկերում ՀՀ դրամով	760	73
Մնացորդներ բանկերում արտարժույթով	2,069	7,355
	2,829	7,428

7. Շնորհներ

Ակտիվներին վերաբերվող շնորհներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	18,074	3,499
Ստացված շնորհներ	2,729	21,766
Շնորհից եկամուտ	(3,574)	(7,191)
Տարեվերջի մնացորդ	17,229	18,074

Եկամուտներին վերաբերվող շնորհներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	5,110	..
Ստացված շնորհներ	33,133	36,002
Շնորհից եկամուտ	(33,221)	(30,892)
Տարեվերջի մնացորդ	5,022	5,110

8. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,454	2,088
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	374	310
	1,828	2,398

9. Փոխարժեքային տարբերությունից օգուտ/վնաս

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Արդարժույթի փոխարժեքի ազդեցությունը		
Դրամական միջոցներ	(467)	(368)
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	8
Առևտրային կրեդիտորական պարտքեր	-	(22)
	(467)	(382)

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվատվում:
Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

10. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի և այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք համարվում են ընդունելի տվյալ հանգամանքներում:

11. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունը

Ընկերությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության և շուկայական ռիսկերի: Ընկերության ղեկավարությունը վերահսկում է այդ ռիսկերի կառավարման գործընթացը:

Պարտքային ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի մի կողմը իր պարտականությունների չկատարմամբ մյուս կողմի համար կառաջացնի ֆինանսական կորուստ: Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկին՝ կապված գործառնական գործունեության (հիմնականում առևտրային դեբիտորական պարտքեր) հետ:

Վաճառքների գծով պարտքային ռիսկի կառավարումն իրականացվում է հաշվապահության կողմից:

Դեբիտորական պարտքերի գծով իրականացվում է կանոնավոր մոնիտորինգ: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացվում է գնորդի համար արժեզրկման (անհավաքագրելիության) ստուգում՝ անհատական հիմունքով: Հաշվարկները սահմանվում են անցյալում փաստացի կրած վնասների հիման վրա: Պարտքերի համար ապահովություն չի պահանջվում: Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Առևտրային դեբիտորական պարտքերի ռիսկի համակենտրոնացումը գնահատվում է ցածր:

Իրացվելիության ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ Ընկերությունը դժվարություններ կունենա իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Ընկերությունը իրականացնում է դրամական միջոցների դեֆիցիտի ռիսկի նկատմամբ վերահսկողություն՝ օգտագործելով շարունակական իրացվելիությունը պլանավորելու գործիքը:

Բոլոր ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքները հավասար են չզեղչված պայմանագրային վճարումներիին:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների մարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ հիմնված չզեղչված պայմանագրային վճարումների վրա:

12. Պայմանական պարտավորություններ

Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում:

Ընկերությունը չունի ապահովագրության իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին Ընկերության գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասի: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերություն գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա:

13. Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից կողմից:

14. Գործարքներ ղեկավար անձնակազմի հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը՝

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և հավելումներ	7,711	7,542

15. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքերի բացահայտումներ

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի չեն ունեցել այնպիսի դեպքեր, որոնք կարող էին հանգեցնել 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկությունների ճշգրտման կամ լրացուցիչ բացահայտման: